**Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Փշատավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Երաժշտություն»(7 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի և հոգեբանի (0,75 դրույք փոխարինող) համար**

**Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:**

**Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝**

**- դիմում (ձև 1),**

**- 1 լուսանկար 3x4 չափի,**

**- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),**

**- անձը հաստատող փաստաթուղթ,**

**- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),**

**- ինքնակենսագրություն (ձև 5),**

**- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,**

**- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,**

**- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),**

**- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:**

**Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:**

**Փաստաթղթերն ընդունվում են 2025թ.-ի հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:**

**Մրցույթը տեղի կունենա 2025թ. նոյեմբերի 17-ին՝ ժամը 15:00-ին «Փշատավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝Արմավիրի մարզ գ.Փշատավան 17փողոց 33շենք: Տեղեկությունների համար զանգահարել 093-79-41-01 հեռախոսահամարով:**